



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն**

ք. Երևան

« 30 » 06 2020թ N° 733-ԼԻ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ, 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԵԿՇԻՌԸ, ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀԱԲԱԺՆԻ ՉԱՓԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 1-ին և 67-րդ հոդվածի 1-ին մասերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 18-ի N 513-Ն որոշման 3-րդ կետը, «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.1 կետի «ե», «ը» և «թ» ենթակետերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝
 - 1) «Հայաստանի Պետական Հետաքրքրությունների Ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրենների խորհրդի կազմը՝ համաձայն Հավելվածի:
 - 2) Ընկերության 2019 թվականի հաշվապահական հաշվեկշիռը 756150 հազ. դրամ հանրագումարով:
 - 3) Ընկերության կողմից պետական բյուջե վճարման ենթակա շահաբաժնի չափը 2883,5 հազ. դրամ
2. Ընկերության տնօրենին՝
 - 1) Ոչ ուշ, քան մինչև սույն թվականի հոկտեմբերի 1-ը ապահովել շահութաբաժնի վճարումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 9000005200515 հաշվին:
 - 2) Սահմանված կարգով հայտարարել Ընկերության 2019 թվականի գործունեության աուդիտն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ:

ՏԻԳՐԱՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Էկոնոմիկայի նախարարի
2020թ. 06 30-ի
N 133-Վ հրամանի

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ձ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՆԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Տիգրան Ավինյան	Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ (խորհրդի նախագահ)
Անետա Բաբայան	Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Ավինյանի խորհրդական
Սոնա Թևանյան	Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Տիգրան Ավինյանի օգնական
Իսիդորո Լուչիոլա	Իտալիայի Հանրապետության քաղաքացի
Դոմինիկ դը Վիլպեն	Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի (Ֆրանսիայի նախկին վարչապետ)